ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔՈՒՍՏ ՇԵՇՏՎԱԾ ԱԲՍԻԴՈՎ ՄԻԱՆԱՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ

Հայ ճարտարապետական հուշարձանների հետաքրքրական ենթատիպ՝ վաղ միջնադարի արտաքուստ դուրս եկող աբսիդով միանավ եկեղեցիները հատուկ ուսումնասիրության չեն արժանացել։ Մինչև վերջերս այդ կառուցվածքներից հայտնի էին մեկ-երկուսը միայն։ Դրա հետևանքով ընդունված էր այն տեսակետը, որ արտաքուստ դուրս եկող աբսիդով միանավ եկեղեցիները հայ ճարտարապետությանը բնորոշ չեն։ Այս տիպի հուշարձաններից մասնագիտական գրականության մեջ ներկայացված էին Ջառջառիսը, Փարպիի Ծիրանավորը և Ն. Տոկարսկու պեղումներով բացված Ջրվեժի միանավ եկեղեցին։ Նկարագրելով վերջինիս աբսիդը, Ն. Տոկարսկին նշում է, որ հայկական միանավ հուշարձաններում արտաքուստ դուրս եկող աբսիդը բավական հազվագյուտ երևույթ է[1]։ Սակայն վերջին տարիների հետազոտությունների շնորհիվ Հայաստանի տարբեր շրջաններում հայտնաբերվեցին վաղ միջնադարի մի շարք նույնատիպ հուշարձաններ ևս (Լուսակերտ, Բատիկյան, Վերիշեն, Ոսկեվազ, Իմիրզեկ, Բայբուրդ), որոնք հիմք են տալիս վերանայելու այդ տեսակետը։

Հայաստանում արտաքուստ դուրս եկող աբսիդով միանավ կառուցվածքի հնագույն օրինակը Ցոլակերտի (Տաշբուրունի) հուշարձանն է։ Այն բավական հայտնի է մասնագիտական գրականության մեջ և ներկայացվում է որպես ուրարտական տաճարի ճարտարապետական ձևերից մեկը[2]։ Ցոլակերտի հուշարձանը գտնվում է Արարատ լեռան հյուսիս-արևմտյան լանջերին (ժամանակակից Թուրքիայի տարածքում) և հայտնաբերվել է XIX դ. վերջերին, պեղումների ընթացքում[3]։ Այն արևելքից-արևմուտք ձգված բավական մեծ շենք է (արտաքին չափերն են մոտավորապես 11,5×29 մ), որն արևելքից ավարտվում է եկեղեցու աղոթասրահի լայնությունն ունեցող, ներսից և դրսից կիսաշրջանաձև աբսիդով։ Պատերը բավական հաստ են և շարված են բազալտե խոշոր, մաքուր տաշած քարերից, առանց շաղախի[4]։ Սակայն աբսիդի շարվածքը տարբեր է՝ քարերը ավելի փոքր են և կիսամշակ։ Բեմը մեկ աստիճան բարձր է աղոթասրահի հատակից (ինչպես ընդունված է վաղ միջնադարի հայկական եկեղեցիներում)։ Ներսից, աբսիդի պարագծով, քարե կիսաշրջանաձև նստարան կա։ Դռները երկուսն են՝ հյուսիսից և հարավից։

---

[1] Н. М. Токарский, Джрвеж, II, Вохджаберд («Археологические раскопки в Армении», № 11, Ереван, 1964, стр. 23).

[2] К. Л. Оганесян, Архитектура Урарту («Всеобщая история архитектуры», т. 1, М., 1970, стр. 266).

[3] А. А. Ивановский, По Закавказью («Материалы по археологии Кавказа», вып. VI, М., 1911, стр 41—43).

[4] *Նույն տեղում, էջ 41։*

Արևմտյան պատը շարունակվում է դեպի հարավ՝ հավանաբար եղել է այլ շինության կամ արտաքին սրահի մասը[5]։ Հյուսիսային և հարավային պատերի երկայնքով կան գետնի մեջ խրված բազալտե անհավասար քարեր, որոնք շենքի հատակագծին եռանավ կառուցվածքի տեսք են տալիս։ Սակայն հարավային կողմի քարը դրված է պատից 0,5 մ էլ պակաս հեռավորության վրա, իսկ հյուսիսայինը՝ մոտ 1 մ մինչև պատը և 0,5 մ մինչև հյուսիսային պատի ներսի կողմի որմնախարիսխը։ Այսքան փոքր հեռավորության դեպքում դժվար է խոսել հուշարձանի եռանավության մասին, մանավանդ, ինչպես նշվեց, աբսիդը ներսից ունի սրահի լայնությունը, որ բնորոշ է միանավ հորինվածքին։ Հուշարձանը ներսի լայնությամբ նույնպես ավելի մոտ է միանավ եկեղեցիներին, քան եռանավ բազիլիկաներին, որովհետև վաղ միջնադարի Հայաստանի միանավ եկեղեցիների լայնությունը հասնում է մինչև 6—7 մ-ի, իսկ եռանավ բազիլիկաների լայնությունը տատանվում է 9,5—10 մ-ի սահմաններում[6]։

Ցոլակերտի հուշարձանի առկա հորինվածքի ժամանակաշրջանի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան։ Հավանական է Ա. Սահինյանի այն ենթադրությունը, որ աբսիդը հետագայի հավելվածք է[7]։ Ա. Իվանովսկու հետ Ցոլակերտի համալիրը պեղող Մ. Նիկոլսկին այն համարում է «քրիստոնեական ծագում ունեցող...» և որոշակի նշում, որ այդ «...քրիստոնեական շենքերը կանգնեցվել են ավելի հին շենքերի տեղում և կառուցվել վերջիններիս քարերից...»[8]։ Հետևաբար, պետք է ընդունել, որ Ցոլակերտի միանավ դահլիճի այս հորինվածքը ստեղծվել է քրիստոնեության ընդունումից հետո, և եթե նկատի ունենանք Հայաստանի IV—V դդ. միանավ եկեղեցիների համեմատ նրա ավելի հնաոճ ձևերը, ապա այդ տեղի է ունեցել IV դ. առաջին իսկ տարիներին։

Գորիսի շրջանի Վերիշեն գյուղում կանգուն ս. Հռիփսիմե եկեղեցին Հայաստանի միանավ հուշարձաններից իր չափերով (27,3 մ երկարությամբ) զիջում է միայն Ցոլակերտին։ Ուղղանկյուն դահլիճը արևելքից ավարտվում է դրսից և ներսից կիսաշրջանաձև աբսիդով։ Ըստ ղռան ճակատակալ քարի արձանագրության եկեղեցին հիմնովին վերակառուցվել է 1621 թ., սակայն հարավային պատում պահպանվել է հնագույն մուտքը (այժմ փակված), երկու կողմերում քարե բարձակներով, նման Սիծեռնավանքի եռանավ բազիլիկայի մուտքերին (IV դ., վերակառուցված V դ.)։ Վերիշենի բարձակների վրա քանդակված է շրջանագծի մեջ ներառված վեց թերթանի վարդյակ։ Պատերի շարվածքում օգտագործված են նաև IV—V դդ. հայ ճարտարապետությանը բնորոշ նախնական կառուցվածքի բեկորներ (օրինակ, ատամնավոր քիվ)։ Աղոթասրահը ձգված է արևելքից-արևմուտք։ Իր այս առանձնահատկությունների, ինչպես նաև հնաոճ մանրամասների հետևանքով Վերիշենի եկեղեցին նույնպես պետք է համարել IV դ. հուշարձան։

---

5 Ալեքսանդր Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 192։

6 Ա. Սահինյան, Զովունիի ճարտարապետական խումբը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1968, № 1, էջ 109)։

7 Ալեքսանդր Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, էջ 192։

8 М. В. Никольский, Клинописные надписи Закавказья («Материалы по археологии Кавказа», вып. V, М., 1896, стр. 21).

Լուսակերտից հյուսիս-արևելք, Հրազդանի ձորալանջին, գտնվում է այս տիպին պատկանող մի շատ կարևոր և հանգուցային հուշարձան[9], որի աղոթասրահը (4,9×8,2 մ) արևելքից ավարտվում է ներսից շեշտված պայտաձև հատակագծով աբսիդով։ Եկեղեցին ունեցել է շինարարական երկու շրջան։



Նկ. 1. Արտաքուստ շեշտված աբսիդով միանավ հուշարձանների աղյուսակ. 1) Ցոլակերտ, 2) Վերիշեն, 3) Լուսակերտ, 4) Բատիկյան, 5) Ջառչառիս, 6) Իմիրղեկ, 7) Լուսակերտ (V դ. վերակառուցումից հետո), 8) Շողաղավանք, 9) Փարպի, 10) Ոսկեվազ, 11) Ժրվեժ, 12) Բայբուրդ։

9 Մ. Հասրաթյան, Լուսակերտի ճարտարապետական երկու հուշարձաններ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1972, № 2, էջ 31—35)։

Առաջինից պահպանվել են պատերը ողջ պարագծով, 1—2 մ բարձրությամբ, կառուցված կոպիտ մշակված և անմշակ բազալտ քարերից, կրաշաղախով։ Աբսիդը դրսից կիսաշրջանաձև է։ Այս պատերի վրա ավելի ուշ բարձրացվել են սրբատաշ տուֆից պատեր, իսկ ներսից ավելացվել է մեկ զույգ որմնասյուն, որոնց վրա նստել է թաղակիր կամարը։ Հետևաբար, այդ շրջանում նախնական փայտե ծածկը փոխվել է քարե թաղով, իսկ աբսիդը դրսից դարձել է բազմանիստ (յոթանիստ)։ Աղոթասրահի ներսում ընդերկայնական առանցքով շարված բազալտե երեք խարիսխները դրվել են ուշ միջնադարում, երբ արդեն քանդված քարե ծածկը նորից փոխարինվել է փայտով։ Մուտքի բարավորը, որը դրվել է վերակառուցումից հետո, ունի նույն մշակումը, ինչ Բասաղի բազիլիկայի (IV—V դդ.) հարավային ու արևմտյան և Երերույքի բազիլիկայի (V դ.) արևմտյան մուտքերը։ Այս կարևոր մանրամասը թույլ է տալիս որոշելու Լուսակերտի եկեղեցու կառուցման և վերակառուցման ժամանակաշրջանները և նրա նախնական հորինվածքը թվագրել IV դ., իսկ վերակառուցումը V դ.։ Լուսակերտի հուշարձանը կարևոր է հայ ճարտարապետության համար ոչ միայն նրանով, որ ունենք արտաքուստ կիսաշրջանաձև աբսիդով IV դ. հուշարձան, այլև շինարարական տեխնիկայի առանձնահատկություններով։ Լուսակերտի եկեղեցու օրինակը ցույց է տալիս, որ վաղ միջնադարում Հայաստանում պաշտամունքային շենքերը կառուցվել են ոչ միայն սրբատաշ քարից, ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ, այլև կիսամշակ և անմշակ քարերից։ Այս փաստը հնարավորություն է տալիս ճշտելու նաև որոշ հուշարձանների կառուցման ժամանակաշրջանը։ Նույն շինարարական տեխնիկայով են կառուցված նաև Ծովինարի Մորո-Ջորո վանքի ս. Աստվածածին (V դ.) և Բյուրականի Արտավազիկ (VII դ.) փոքր խաչաձև եկեղեցիները (միայն այս հուշարձաններում որոշ հանգույցներ շարվել են սրբատաշ քարերից)[10]։ Այս շինարարական տեխնիկան իր ակունքներն ունի նախաքրիստոնեական Հայաստանի ճարտարապետության մեջ։ Ճիշտ նույն եղանակով են կառուցված, օրինակ, Գառնիի պալատական շենքը և բաղնիքը։ Այստեղ ևս պատերը ճեղքված բազալտից և որձաքարից են՝ կրաշաղախով, իսկ անկյունները շարվել են տաշված քարերից։ Լուսակերտի եկեղեցին և ընդհանրապես Հայաստանի արտաքուստ կիսաշրջանաձև աբսիդով միանավ եկեղեցիների հորինվածքները որոշակի առնչվում, նույնիսկ կրկնում են, Գառնիի III դ. բաղնիքի սենյակների ձևը։ Նրանց «հատակագիծն ունի միևնույն ուղղությամբ միմյանց հաջորդող չորս սենյակներից կազմված հստակ հորինվածք։ Սենյակների դեպի հարավ-արևելք ուղղված պատերը արտաքինից ունեն կորագիծ, իսկ ներսից մի մասը՝ պայտաձև, մի մասը՝ կիսաշրջանաձև կառուցվածք»[11]։ Ելնելով պեղումների ընթացքում գտնվող ծեփի կորագիծ բեկորներից, ենթադրվում է, որ դրանք ունեցել են թաղե ծածկ[12]։

Ինչպես տեսնում ենք, IV դ. միանավ եկեղեցիները թե՛ հորինվածքով և թե՛ կառուցողական տեխնիկայով հար և նման են III դ. հելլենիստական Հա-

---

10 Վ. Գ. Գրիգորյան, Վաղ միջնադարի հայկական քառախորան հուշարձանները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 1, էջ 74—79)։

11 «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 61։

12 Նույն տեղում։

յաստանի այս աշխարհիկ կառուցվածքներին։ Այս նմանությունը չպետք է համարել պատահական, որովհետև հայ ճարտարապետության պատմության երկու կարևորագույն փուլերի՝ հեթանոսականի և քրիստոնեականի միջև խզում չի եղել և մեկը հանդիսացել է մյուսի հաջորդական զարգացումը։ Այս տեսակետը հիմնավորվում է ինչպես վաղ միջնադարի Հայաստանի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությամբ, այնպես էլ հայ պատմիչների բազմաթիվ տեղեկություններով[13]։



Նկ. 2. Բատիկյանի միանավ եկեղեցու ընդլայնական կտրվածքը։

Բատիկյանի միանավ եկեղեցին գտնվում է գյուղի գերեզմանոցում։ Այն համեմատաբար լավ է պահպանվել՝ քանդված է միայն ծածկը։ Աղոթասրահը (6,2×3,6 մ) արևելքից ավարտվում է ներսից պայտաձև, դրսից կիսաշրջանաձև աբսիդով։ Եկեղեցին կառուցված է կարմիր գույնի սրբատաշ տուֆ քարերից։ Միակ դուռը հարավային պատում է և նկատելի է, որ այն հետագայում նեղացվել է։ Այդ պատի նեղ լուսամուտը հետագա վերանորոգման արդյունք է։ Աբսիդի պատերի վերին մասը վերաշարված է մանր, կիսամշակ քարերով։ Բեմի կամարից պահպանվել են ստորին քարերը, որոնք ցույց են տալիս, որ կամարը եղել է շեշտված պայտաձև։ Կամարը հենված է վաղ միջնադարի հայ ճարտարապետությանը բնորոշ պարզ իմպոստներին։ Նրանց տակի քարերին կա միևնույն երկրաչափական զարդաքանդակը՝ հավերժության նշանը, ներգծված եռանկյունիներով մշակված օղակի մեջ։ Դրսից՝ հարավային պատի արևելյան անկյունում, կա մի այլ զարդաքանդակ՝ վեց թերթանի վարդյակ, ներգծված նույնպիսի օղակի մեջ։ Հետաքրքրական է եկեղեցու հարդարանքում խաչի բացակայությունը։ Մեր կարծիքով, այս առանձնահատկությունը բնորոշ է հատկապես IV դ. հուշարձաններին, որովհետև արդեն V դ. եկեղեցիների հարդարանքում խաչը դառնում է պարտադիր

13 Ա լ ե ք ս ա ն դ ր Մ ա հ ի ն յ ա ն. Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը։

տարր։ Բատիկյանի միանավ եկեղեցու ընդերկայնական պատերի նախնական հատվածները (պատերի վերին մասը հետագայում վերաշարվել է) աբսիդի կամարի կենտրոնից զգալի բարձրանում են։ Այս փաստը ցույց է տալիս, որ Բատիկյանի հուշարձանը հենց սկզբից ունեցել է փայտե ծածկ, ինչպես Հայաստանի հնագույն միանավ եկեղեցիների մեծ մասը։ Նշված առանձնահատկությունները հիմք են տալիս Բատիկյանի այս նորահայտ հուշարձանը թվագրելու IV դ.։

Արտաքինից կիսաշրջանաձև աբսիդով միանավ հուշարձանները Հայաստանում, ճիշտ է, բազմաթիվ չեն, սակայն նշված օրինակները բավարար են հերքելու այն տեսակետը, որ այդ տիպի կառուցվածքներն ընդհանրապես հայ ճարտարապետությանը ծանոթ չեն[14]։

Արագածի շրջանի Ջառջառիս գյուղում գտնվում է միանավ եկեղեցիներից խոշորագույններից մեկը։ Այն բարձրանում է բազմաստիճան որմնախարիսխի վրա և կառուցված է մաքուր տաշած տուֆ քարերից։ Պահպանվել են հյուսիսային պատը լրիվ և արևելյանի կեսից ավելին։ Աղոթասրահը (6,62×17,63 մ), արևելքից ավարտվում է ներսից պայտաձև աբսիդով, որը դրսից հնգանիստ է[15]։ Աբսիդը լուսամուտ չունի, նրա փոխարեն քանդակված է շրջանագծի մեջ ներառնված հավասարաթև խաչ։ Աղոթասրահը երեք զույգ որմնամույթերով և թաղակիր կամարներով բաժանվում է չորս հատվածի։ Ընդերկայնական պատերին կից՝ որմնամույթերի միջև, ձգվում են երկկենտրոն և պայտաձև կամարներ։ Ջառջառիսի եկեղեցին «... ինչպես իր հատակագրծային ու տարածական-ծավալային հորինվածքով, այնպես էլ մանրամասների մշակմամբ (Т-նման մասսիվ որմնամույթեր, պայտաձև թաղակիր կամարներ, հնագույն ձևի իմպոստներ, մոդուլյոններով մշակված արխաիկ քիվ, քրիստոնեական վաղ շրջանի քանդակներ և այլն) անշուշտ IV—V դարերի կառուցվածք է»[16]։

Արտաշատի շրջանի հյուսիսում՝ Իմիրզեկ հնավայրից արևմուտք, պահպանվել է արտաքուստ բազմանիստ աբսիդով մի եկեղեցի, որը մասնագիտական գրականությանը անհայտ է։ Ձգված աղոթասրահը (4,15×10,55 մ ներսի չափերով) ավարտվում է կիսաշրջանաձև աբսիդով, որը դրսից հնգանիստ է։ Եկեղեցու արևելյան ճակատի մի մասը հողածածկ է, սակայն աբսիդի հարավային կողմի պահպանված երկու նիստերը հնարավորություն են տալիս պարզելու նիստերի քանակը։ Ողջ հորինվածքը բարձրանում է բազմաստիճան որմնախարսխի վրա։ Մուտքը հյուսիսից է։ Դռան ուղղանկյուն բացվածքը ծածկվում է հորիզոնական բարավորով (հնարավոր է, որ մուտք եղած լինի նաև հարավային պատում)։ Պատերը (1,05 մ լայնությամբ) պահպանվել են մոտ 1,5 մ բարձրությամբ և շարված են մաքուր տաշած բազալտից։ Սակայն նկատվում են վերակառուցման հետքեր՝ կատարված կիսամշակ քարերից։ Ընդերկայնական պատերին կից են մեկ զույգ որմնամույթ, որոնք կրել են միակ թաղակիր կամարը (հետևաբար ծածկը քարե թաղով է իրականացվել)։ Հուշարձանի հարդարանքից ոչինչ չի պահպանվել (գուցե

---

[14] A. Khatchatrian, L'Architecture Arménienne de IVe au VIe siecle, Paris, 1971, p. 42.

[15] «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 98։

[16] Նույն տեղում, էջ 100։

մանրամասները երևան գան մաքրման աշխատանքներից հետո)։ Հորինվածքով Իմիրղեկի եկեղեցին պատկանում է V դ. հայ ճարտարապետության նույնատիպ հուշարձանների շարքին։

Շողագավանքի (Մարտունու շրջան, Զորագյուղ) միանավ եկեղեցին (սրբատաշ տուֆից), կիսավեր է։ Մեզ են հասել հյուսիսային պատը և արևմտյանի մի մասը։ Աղոթասրահի ներսի չափերն են 3,7×5,18 մ[17]։ Ներսից կիսաշրջանաձև աբսիդը արտաքուստ հնգանիստ է. պահպանվել են առաջին շարքի քարերը։ Դուռը հյուսիսից է։ Մեկական լուսամուտներ կան հյուսիսային և արևմտյան պատերում։ Ծածկը քարե թաղով է իրականացվել, մեկ թա-



Նկ. 3. Փարպիի Ծիրանավորի հատակագիծը. ա) V դ., բ) VII դ. վերակառուցումից հետո, գ) X դ. վերակառուցումից հետո։

ղակիր կամարով։ Վերջինս հենվել է ընդերկայնական պատերի վերին մասում տեղադրված քարե բարձակների վրա։ Հյուսիսային և հարավային պատերին կից ձգվել են զույգ որմնակամարներ։ Շողագավանքը նշանավոր կրոնական կենտրոն էր։ Այն բաղկացած է երեք եկեղեցիներից՝ միանավից, քառաբսիդ գմբեթավոր փոքր եկեղեցուց (VII դ.) և ս. Պետրոս տաճարից (IX դ.)։ Հնագույնն այս համալիրում միանավն է, որն, ըստ երևույթին, հիմնովին վերակառուցվել է IX դ., որովհետև «իր շինարարական տեխնիկայով այն համարյա ոչնչով չի տարբերվում նույն Շողագավանքի գմբեթավոր տաճարից»[18]։ Սակայն անկասկած է, որ միանավ եկեղեցին կրկնել է հնագույնի հատակագծային հորինվածքը, որովհետև արտաքուստ բազմանիստ աբսիդով միանավ եկեղեցիներ կառուցվել են միայն վաղ միջնադարում։ Բայց Շողագավանքի միանավ եկեղեցին իր հորինվածքից բացի ունի մի այլ անվիճելի ապացույց վաղ միջնադարում, հավանաբար V դ., կառուցված լինելու մասին։ Դա աբսիդի կամարի հյուսիսային իմպոստի քարն է, որը պահպանել է վաղ միջնադարի հայ ճարտարապետությանը բնորոշ և տարածված զարդաքանդակը՝ հավասարաթև խաչը, ներգծված շրջանագծի մեջ։

---

17 Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 138։

18 Նույն տեղում։

Փարպիի (Աշտարակի շրջան) Միրանավոր եկեղեցին քննվող տիպի լավագույն հուշարձաններից է։ Ցնայած Թ. Թորամանյանը ժամանակին այն ուսումնասիրել է և հրատարակել է նրա հատակագիծը[19], այս կարևոր և համեմատաբար լավ պահպանված հուշարձանը հետագայում հայ ճարտարապետությանը վերաբերող աշխատություններում միայն մեկ անգամ է ներկայացվել[20]։

Փարպիի Միրանավորն ունեցել է վերակառուցման մի քանի շրջան և այժմ մեզ հասել է բերդ-եկեղեցու տեսքով։ Սակայն այն պահպանել է թե՛ իր նախնական ծավալային և հատակագծային հորինվածքը, թե՛ մանրամասներն ու սկզբնական հարդարանքը։ Պահպանվել է նաև հուշարձանի նախնական բարձրությունը որոշող աբսիդի կամարը։ Այն հնարավորություն է տալիս պարզելու վաղ միջնադարի այս կառուցվածքի ուղղաձիգ համաչափությունները, որոնք այդ տիպի շատ հուշարձաններում այժմ հնարավոր չէ որոշել։

Միրանավորը կառուցված է մաքուր տաշած բազալտե քարերից, կրաշաղախով։ Արևելքից-արևմուտք ձգված ուղղանկյուն դահլիճը (ներսի չափերն են 4,15×8,75 մ) արևելքից ավարտվում է դրսից հնգանիստ, իսկ ներսից կիսաշրջանաձև բավական խոր աբսիդով (Թ. Թորամանյանի մոտ աբսիդը դրսից կիսաշրջանաձև է)[21]։ Մուտքերը երկուսն են՝ արևմտյան և հարավային պատերում։ Նրանք ուղղանկյուն բացվածքներ են, Π-աձև միակտուր բարավորով ծածկված։ Բարավորի վրա կա բեռնաթափման հորիզոնական ճեղք, որից վերև իրականացված է երկրորդ բարավորը՝ նույնպես Π-աձև, բայց երեք քարից, ընդ որում՝ կենտրոնի քարը սեպաձև է։ Այս երկրորդ բարավորը արդեն ոչ թե որպես հեծան է ծառայում, այլ կամար։ Մուտքերի բարավորների նման բեռնաթափումը վերևի պատի շարվածքի ծանրությունից, բնորոշ է Հայաստանի հատկապես IV—VI դդ. հուշարձաններին (Աշտարակի Միրանավոր, Երերույք, Ավանի տաճար և այլն) և հետագայում այլևս չի հանդիպում։ Լուսամուտներ կան բոլոր ճակատներում, բացի հյուսիսայինից։ Աբսիդի, ինչպես նաև հարավային ճակատի երկու լուսամուտները մեկ բացվածքով են, բավական լայն (0,8 մ) և դրսից ու ներսից ունեն միևնույն լայնությունը՝ մի հատկանիշ, որը բնորոշ է IV—V դդ. հայ ճարտարապետությանը։ Լուսամուտների կամարները պայտաձև են։ Արևմտյան պատի վերին մասում, անմիջապես ծածկի տակ, կան զույգ լուսամուտներ, շեշտված պայտաձև կամարներով։ Դրանք միմյանցից բաժանվում են ընդհանուր խուսակով, երկու կիսասյունիկներից բաղկացած միջնորմով։ Նման զույգ լուսամուտները հատկանշական են Հայաստանի IV—V դդ. հուշարձաններին։

Մեծ հետաքրքրություն ունեն Փարպիի Միրանավորի զարդաքանդակները։ Ճիշտ է, հետագայում, բերդի վերածվելուց հետո, ծածկվել են պատերի արտաքին երեսները, սակայն ինտերյերում հարդարանքից շատ տարրեր են պահպանվել։ Հատկապես շքեղ և հարուստ է աբսիդը։ Բեմի պայտաձև կամարի փականքի քարը՝ «կողակը», ունի շրջանի մեջ ներգծված հավասարաթև խաչի քանդակ։ Այս կամարը թույլ է տալիս պարզելու եկեղեցու նախնական հո-

---

19 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 227։

20 Վալենտինա Աբրահամյան, Աշտարակի շրջան, ուղեցույց ալբոմ, Երևան, 1940։

21 Թորոս Թորամանյան, նշվ. աշխ., էջ 227։

ռինվածքի բարձրությունը՝ 8,7 մ, այսինքն, հավասար է եղել դահլիճի երկարությանը, ներսի լայնությանը գերազանցելով երկու անգամ։ Այսպիսի բարձրությունը հատկապես բնորոշ է Հայաստանի վաղ միջնադարի բազիլիկ կառուցվածքներին[22], Կամարը հենվում է աբսիդի երկու քանդակազարդ անկյունների վրա։ Միայն երևում են դրանց բեմահայաց երեսները, որոնք մշակված են որպես խոյակներ։ Երկուսն էլ ունեն գրեթե միևնույն զարդաքանդակը, որի գլխավոր տարրը շրջանագծի մեջ ներգծված հավասարաթև խաչն է՝ շրջապատված ձիթենու ոճավորված տերևներով։ Վերին սալիկը ունի երկրա-



Նկ. 4. Փարպիի Ծիրանավորի ընդերկայնական կտրվածքը (չափագրությունը՝ Թ. Գևորգյանի)։

չափական զարդաքանդակ, որը կրկնվում է նաև արևմտյան ճակատի զույգ լուսամուտների խոյակի վրա։ Դա ուղղանկյուն է, բաժանված անկյունագծերով և փոխուղղահայաց ուղիղներով եռանկյունիների։ Այս զարդաքանդակը հանդիպում է հատկապես V դ. հայկական հուշարձաններում՝ Երերույքում, Տեկորի տաճարում, Ծիծեռնավանքի V դ. վերակառուցված մասում և Ամարասի վանքում գտնվող Գրիգորիսի դամբարանում։ Նշված հուշարձաններից երկուսը որոշակի թվագրված են և պատկանում են V դ. վերջին քառորդին։ Դրանցից առաջինը Տեկորի ս. Սարգիս գմբեթավոր բազիլիկան է (478—490), իսկ երկրորդը՝ Ամարասի դամբարանը (489)[23]։ Սա հիմք է տալիս Փարպիի Ծիրանավորի նախնական հորինվածքը թվագրելու V դ. երկրորդ կեսով։

Ծիրանավորի աբսիդը շեշտված է նաև բարդ տրամատ ունեցող ատամնաշարով ձևավորված հորիզոնական գոտիով։ Նման գոտի աբսիդներում երբեմն հանդիպում է միայն վաղ միջնադարի հուշարձաններում (V դ. Երերույքի և Աշտարակի եռանավ, Տեկորի գմբեթավոր բազիլիկաներում, ինչպես նաև Ծովիզի Մորո-Զորո վանքի ս. Աստվածածին եկեղեցում)[24]։

Փարպիում արտաքին հարդարանքից երևում է միայն արևմտյան դռան բարավորի վրա քանդակված մեծադիր հավասարաթև խաչը շրջանագծի մեջ ներգծված։

---

22 Ալեքսանդր Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, էջ 175։

23 Մ. Մ. Հասրաթյան, Ամարասի ճարտարապետական համալիրը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 5, էջ 36—43)։

24 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 1, էջ 79։

Տիրանավորը VII դ. հիմնովին վերանորոգվել է[25]։ Փայտե սկզբնական ծածկը փոխարինվել է քարե թաղով։ Ներսից ընդերկայնական պատերին կցվել են երեք զույգ խոշոր որմնամույթեր, որոնց միջև գցվել են կամարներ, ինչպես հյուսիսային և հարավային պատերին զուգահեռ, այնպես էլ հանդիպակաց մույթերի միջև (թաղակիր կամարներ)։

Թե՛ կամարները և թե՛ թաղը երկկենտրոն են։ Կամարները հենվում են պարզ ձև ունեցող (հաջորդաբար փոքրացող երեք սալիկ) իմպոստների վրա։ Նոր ծածկը ավելի ցածր է ստացվել նախնականից՝ աբսիդի կամարը դուրս է մնացել տանիքից։ Վերակառուցման ժամանակ արևմտյան որմնամույթերը ծածկել են աբսիդի խոյակների արևմտյան դռները, իսկ հարավային կամարները՝ այդ տիպի լուսամուտների վերևի մասը։

Եկեղեցու վերակառուցված մասը կարևոր է միջնադարյան Հայաստանի շինարարական արվեստի պատմության համար, որովհետև պարզվում է, որ երկկենտրոն կամար և թաղ օգտագործվել են արդեն վաղ միջնադարի Հայաստանի ճարտարապետության մեջ։ Երկկենտրոն կամարները, իսկապես, հազվադեպ են այդ ժամանակաշրջանի հայկական հուշարձաններում։ Սակայն դրանց գոյության ապացույցն են նաև IV—V դդ. Տիծեռնավանքի եռանավ բազիլիկայի թաղը և մույթերի միջև ձգված որոշ կամարները[26] (Տիծեռնավանքի այդ մույթերն իրենց կամարներով և միջին նավի թաղը կառուցվել են ոչ ուշ քան V դ., որովհետև մույթերի իմպոստները և գարդաքանդակները բնորոշ են Հայաստանի IV—V դդ. հուշարձաններին), Ջառջառիսի (IV—V դդ.) արևելյան որմնակամարը, Ավանի (VI դ.) ու Բագարանի (VII դ.) տաճարների գմբեթակիր կամարները։ Նշված օրինակներն ակնհայտ ցույց են տալիս, որ IV—VII դդ. հայ ճարտարապետության մեջ օգտագործվել են ոչ միայն պայտաձև և կիսաշրջանաձև, այլև երկկենտրոն կամար և թաղ։

Հաջորդ խոշոր վերակառուցումը (երբ եկեղեցին վերածվել է բերդի) տեղի է ունեցել հավանաբար X դ.։ Թ. Թորամանյանը նշում է, որ եկեղեցու տանիքում եղել են IX—X դդ. բնորոշ քանդակազարդ բեկորներ (այժմ այդ մանրամասները չկան)[27]։ Եկեղեցին ողջ պարագծով շրջապատվել է հաստ, ստորին մասում խոշոր որձաքարով և բազալտի կիսամշակ քարերով, իսկ վերին մասում՝ համեմատաբար կանոնավոր տաշված քարերով շարված պատերով (հաստությունը մոտ 1,5 մ)։ Այս պատ-պարիսպը թեթևակի նեղանում է դեպի վեր։ Ներքևում միակ բացվածքը եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց է։ Այս դուռն ունի քարե հաստ սալից պատրաստված փեղկ, որը փակելուց հետո եկեղեցին փաստորեն անմատչելի է դառնում։ Կրկնակի պատերը բարձրանում են տանիքից վեր (մոտ 2 մ), որի հետևանքով ստացվում է պատերով պարփակված մի հարթակ, որտեղ պաշտպանվողները կարող էին պատսպարվել։ Պատերի մեջ հրակնատներ կան։ Տանիքում, կրկնակի պատերին զուգահեռ ու նրանց պարագծով, մոտ 0,5 մ բարձրությամբ երկրորդ պատն է, որի վրա կանգնել են պաշտպանվողները թշնամու վրա կրակելու համար։ Այս պատը կիսով չափ հենվում է ծածկի թաղի վրա և գուցե գմբեթարդի քանդ-

---

25 Թորոս Թորամանյան, նշվ. աշխ., էջ 227։

26 Paolo Cuneo, La basilique de Tsitsernakavank dans le Karabagh, REArm, tome IV, Paris, 1967.

27 Թորոս Թորամանյան, նշվ. աշխ., էջ 227։

վելու պատճառն է եղել։ Հրակնատներն իրենց ձևով համապատասխանում են հրազենի օգտագործմանը և հանդիպում են ուշ միջնադարում։ Այս հրակնատները Փարպիում ավելացվել, իսկ պատերի վերին հատվածները վերաշարվել են XV—XVI դդ., երբ Հայաստանը դարձել էր Թուրքիայի և Պարսկաստանի միջև մղվող պատերազմների թատերաբեմ։ Եկեղեցին շրջապատող կրկնակի պատի մեջ բացված բարավորի վրա պահպանվել է 1190 թ. արձանագրություն։ Եկեղեցին ամրոցի է վերածվել, ամենայն հավանականությամբ, X դ., «երբ արաբները զարհուրելի ավերումներ էին գործում այդ շրջանի մեջ։ Գուցե Բյուրականի վրա արաբների հարձակումը և շրջանում արած կոտորածները ստիպեցին վարպետներին եկեղեցին իբրև բերդ ամրացնել, որպես վերջին ապաստարան...»[28]։

Ոսկեվագից (Աշտարակի շրջան) ոչ հեռու, Աղթամիր նախնադարյան ամրոցի մոտ, պահպանվել է «Բաղալի ժամ» կոչվող միանավ եկեղեցու պատերի հիմքը։ Այն կառուցված է մաքուր տաշած բազալտե քարերից։ Դահլիճը (6,7×9,4 մ) արևելքից ավարտվում է ներսից շեշտված պայտաձև, իսկ դրսից՝ հնգանիստ աբսիդով։ Եկեղեցին բարձրացել է բազմաստիճան որմնախարսխի վրա։

Մուտքի տեղը հայտնի չէ։ Այն կարող էր լինել ինչպես հարավից, այնպես էլ արևմուտքից։ Պատերը համեմատաբար բարակ են (0,9 մ) և համապատասխանում են փայտե ծածկի։ Նախնական ծածկը փայտից լինելը հաստատվում է և այն փաստով, որ հյուսիսային պատին հետագայում կցվել է Т-աձև որմնամույթ՝ թաղակիր կամարի, ինչպես և պատերին կից ընդերկայնական կամարների համար։ Նոր ծածկը՝ քարե թաղը, արդեն հենվել է ոչ թե բարակ պատերի, այլ այս կամարների վրա։ Հուշարձանի հարավային կողմում կոթողների բեկորների հետ ընկած են եկեղեցու ավելացված մասի խոյակները և այլ մանրամասներ, որոնք բնորոշ են V դ. հայ ճարտարապետությանը։

Հետևաբար եկեղեցու սկզբնական՝ փայտե ծածկով հորինվածքն ավելի վաղ է կառուցվել՝ IV դ. և ոչ ուշ քան V դ. սկիզբը։

Արտաքուստ դուրս եկող, բազմանիստ աբսիդով միանավ եկեղեցի բացվեց 1958—1962 թթ., Երևանի մոտ գտնվող Ջրվեժ գյուղում Ն. Տոկաբսկու պեղումների ընթացքում։ Այն կառուցված է տեղական սև և կարմիր գույնի տուֆի մաքուր տաշած քարերից։ Ողջ հուշարձանը բարձրանում է եռաստիճան որմնախարսխի վրա։ Քարե սալահատակով ուղղանկյուն աղոթասրահը (4,08×8,35 մ) արևելյան կողմից ավարտվում է ներսից կիսաշրջանաձև, դրսից հնգանիստ աբսիդով[29]։ Եկեղեցու միակ մուտքը հյուսիսից է։ Մանրամասներից պահպանվել են վաղ միջնադարի հայ ճարտարապետությանը բնորոշ ատամնաշարով քիվի անկյունաձև քարը և շքամուտքի կիսասյան բեկորը։ Եկեղեցու հյուսիս-արևելյան կողմում գտնվում են հուշասյան պատվանդանի որմնախարիսխները, որոնք նստում են եկեղեցու որմնախարիսխի արդեն հողածածկ աստիճանի վրա։ Հետևաբար, կոթողը կանգնեցվել է, երբ եկեղեցին վաղուց արդեն կառուցված է եղել։ Կոթողից արևելք, մոտ 1 մ հեռավորության վրա, ստորգետնյա դամբարանի մուտքն է։ Այսպիսով, Ջրվեժի համալիրն ունի Հայաստանի վաղ միջնադարի մեմորիալ հա-

[28] Նույն տեղում։

[29] Н. М. Токарский, Джрвеж, II, Вохджаберд, стр. 26.

մալիրներին բնորոշ կազմ՝ եկեղեցի, կողքին հուշասյուն և դամբարան։ Ն. Տոկարսկին Ջրվեժի եկեղեցին թվագրում է V դ.[30]։ Ա. Խաչատրյանը այն ավելի վաղ է թվագրում՝ IV դ.[31]։ Այս թվագրումը ավելի հավանական է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ եկեղեցու արդեն հողածածկ որմնախարսխի վրա կառուցված կոթողն իր մանրամասներով V դ. է պատկանում։

Խոսրովի արգելանոցում, պատմական Այրարատի Ոստան գավառում, կանգուն է այս տիպի վաղ միջնադարի միանավ հուշարձաններից ամենալավ պահպանված Բայբուրդ գյուղի եկեղեցին։ Այն ուսումնասիրել և մասնագիտական գրականության մեջ ներկայացրել է Վ. Մ. Սիսուը, հրատա-



Նկ. 5. Բայբուրդի միանավ եկեղեցու ընդլայնական կտրվածքը։

տրակելով հատակագծի և կտրվածքի սխեմատիկ չափագրությունները[32]։ Սակայն հատակագծում եկեղեցու աբսիդը դրսից ուղղանկյուն է, որն իրականությանը չի համապատասխանում։ Միաժամանակ նշվում է, որ «... այդ եկեղեցին պետք է դասել ուշ շրջանի կառուցվածքների շարքին»[33]։

Բայբուրդի եկեղեցին ամբողջովին պահպանել է իր տարածական-ծավալային հորինվածքը (քանդվել է միայն ծածկի թաղից մի հատված)։ Կառուցված լինելով բլրի թեքադիր լանջին, եկեղեցին դարերի ընթացքում երեք կողմից մինչև տանիքը ծածկվել է հեղեղների բերած տիղմով և այժմ փաստորեն կիսով չափ ստորգետնյա է։ Դա էլ հենց նպաստել է կառույցի լավ պահպանվելուն։ Այժմ գետնի երեսին երևում են միայն հարավային ճակատի վերին մասը և եկեղեցու հարավ-արևելյան անկյունը; որը հնարավորություն է տալիս պարզելու աբսիդի արտաքին տեսքը. այն բազմանիստ է (հնգա-

30 Նույն տեղում, էջ 28։
31 A. Khatchatrian, L'Architecture Arménienne du IVe au VIe siecle, p. 42.
32 «Материалы по археологии Кавказа», вып. XIII, М., 1916, стр. 70.
33 Նույն տեղում։

նիստ)։ Եկեղեցին շինված է մաքուր տաշված բազալտե քարերից, կրաշաղախով։ Պատերը, 1,1 մ հաստությամբ, կառուցված են մինչև 0,7 մ բարձրություն ունեցող կանոնավոր շարքերով։ Շարվածքի հորիզոնական կարանները մշակված են 45° եզրակոսներով։ Դա հատուկ է Հայաստանի միայն վաղ միջնադարի շինարարական տեխնիկային։ Աղոթասրահը համաչափություններով ձգված է (ներսի չափերն են 3,95×8,25 մ) և լայնությունը հարաբերում է երկարությանն ինչպես 1:2։ Բարձրությունը թաղի տակից մինչև հատակը 5,65 մ է։ Աբսիդը ներսից կիսաշրջանաձև է և դահլիճի հատակից բարձր է մեկ աստիճան (0,25 մ)։ Միակ մուտքը հարավից է։ Դռան բարավորի հորիզոնական սալի վրա քանդակված է հավասարաթև խաչ՝ շրջանագծի մեջ ներգծված։ Լուսամուտները երեքն են՝ հարավային, արևմտյան և արևելյան ճակատներում։ Արևմտյան և բեմի լուսամուտները հետագայում ծածկվել են հողով։ Բոլոր լուսամուտները թեթևակի պայտաձև կամար ունեն։ բավական լայն են և դեպի ներս քիչ են լայնանում։ Քիվը եռաշերտ է՝ կազմված տարբեր բարձրության երկու կիսագլանիկից և սալիկից։ Աբսիդի կամարը շեշտված պայտաձև է և մշակված բավական բարդ տրամատով։ Փականքի քարի վրա հավասարաթև խաչ է քանդակված։ Կամարը հենվում է բեմի երկու անկյունների՝ խոյակների վրա։ Դրանք ունեն միևնույն քանդակը՝ բավական խոր փորագրված արմավի տերևներ։ Եկեղեցու ինտերյերի միակ հարդարված մասը բեմի կամարը և անկյունների խոյակներն են։ Վերջիններս կրկնում են Տեկորի տաճարի (478—490 թթ.) արտաքին ճակատների որմնամույթերի խոյակները։ Բայբուրդի եկեղեցին իր թե՛ հորինվածքով և թե՛ մանրամասներով ակնհայտորեն V դ. կառույց է։ Ելնելով խոյակների ձևից՝ այն կարելի է թվագրել V դ. վերջին քառորդով։

Վերը քննարկված հուշարձանների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ տարբեր չափերի, մանրամասների, ծածկի տարբեր ձևերի դեպքում նրանց հորինվածքներն ունեն որոշակի ընդհանրություն և համաչափությունների նմանություն։ Դրանք բոլորն էլ արևմուտքից-արևելք ձգված կառուցվածքներ են, որոնց երկարությունը զգալիորեն գերազանցում է լայնությանը։ Ունեն բազմաստիճան տրմնախարիսխ և թե՛ քարե թաղի, թե՛ փայտի ծածկի դեպքում ունեցել են երկթեք տանիք։ Դրանց ներսից կիսաշրջանաձև կամ պայտաձև աբսիդները դրսից կիսաշրջանաձև են և հիմնականում հնգանիստ (բացառությամբ Լուսակերտի, որտեղ յոթանիստ են, կիսաշրջանաձև ստորին մասի եզրագծին ավելի մոտ լինելու համար)։ Որոշ հուշարձաններում սկզբնական փայտե ծածկը փոխվել է քարե թաղով։ Շատ քչերն են պահպանել իրենց նախնական ծավալային հորինվածքը, սակայն Բայբուրդի և Փարպիի օրինակների հիման վրա կարելի է ասել, որ այդ տիպի միանավ եկեղեցիները եղել են բավական բարձր (դրանց բարձրությունը գերազանցել է լայնությանը 1,5—2 անգամ)։ Լայնությունները տատանվել են 3,7 մ-ից մինչև 6,7 մ, սակայն եկեղեցիների մեծ մասում այն մոտ 4 մ է, որը բնորոշ է վաղ միջնադարի միանավ եկեղեցիներին ընդհանրապես[34]։ Լայնության և երկարության հարաբերությունը տարբեր է՝ 1:1,4 (Ոսկեվազ, Շողագավանք), 1:1,7 (Լուսակերտ, Բատիկյան), 1:2 (Փարպի, Ջրվեժ, Բայբուրդ), 1:2,5 (Ցոլակերտ, Ջառջառիս, Իմիրզեկ), այսինքն՝ տատանվում է

34 Ա. Սահինյան, Զովունիի ճարտարապետական խումբը։ էջ 109։

1:4-ից մինչև 1:2,5։ Բացառություն է Վերիշենը, որտեղ լայնությունը կողային խորշերի հետ հաշված հարաբերում է երկարությանն ինչպես 1:2,8, իսկ առանց խորշերի՝ 1:5։ Նշված համաչափությունները բնորոշ են հայ ճարտարապետության IV—VI դդ. միանավ եկեղեցիներին[35]։

Կառուցվածքի ուղղանկյուն պատերի մեջ չպարփակված, անկախ ձևից, դեպի դուրս եկող աբսիդով (կիսաշրջանաձև կամ բազմանիստ) հորինվածքը բնորոշ է հայկական միայն վաղ միջնադարի հուշարձաններին։ Նույնիսկ ներսից շրջանաձև կամ պայտաձև, իսկ դրսից ուղղանկյուն, բայց ընդհանուր ծավալից անջատված աբսիդները նույնպես հատուկ են միայն IV—V դդ. հայ ճարտարապետությանը[36]։ Այդ նույն դարերի Ասորիքի միանավ եկեղեցիների և եռանավ բազիլիկաների մեծ մասի աբսիդները նույնպես դուրս են դալիս ընդհանուր ծավալից։ Սակայն, ի տարբերություն հայկական հուշարձանների, որոնց արտաքուստ դուրս եկող աբսիդների ճնշող մեծամասնությունը բազմանիստ է, Ասորիքում դրանք դրսից կիսաշրջանաձև են։

Միանավ, թաղածածկ եկեղեցիներ Հայաստանում կառուցվել են քրիստոնեության ընդունման առաջին տարիներից մինչև ուշ միջնադար։ Սակայն վաղ միջնադարից հետո նրանք բոլորն էլ ունեն պատերի ուղղանկյուն եզրագծի մեջ պարփակված աբսիդ։ Լինեն նրանք առանձին կանգնած, թե վանքային համալիրներին պատկանող եկեղեցիներ (Ամաղու Նորավանքի ս. Գրիգոր, Գոշավանքի ս. Լուսավորիչ, Հաղբատի Ջգրաշեն, Տաթևի ս. Գրիգոր, Մշկավանքի, Քորերի միանավ եկեղեցիներ և այլն)։

Միջնադարում միանավ եկեղեցիներ տարածված էին Վասպուրականում, բայց դրանց ոչ մեկի աբսիդը դրսահայաց չէ[37]։

Վաղ միջնադարում հայ ճարտարապետական հուշարձաններից արտաքուստ բազմանիստ աբսիդ ունեն ոչ միայն միանավ եկեղեցիները, այլև եռանավ և գմբեթավոր բազիլիկաները։ Դրսից եռանիստ աբսիդ ունեն Դվինի եռանավ (V դ.) և Տեկորի գմբեթավոր (V դ.) բազիլիկաները, Դվինի կաթողիկեն VII դ. վերակառուցումից հետո և Թալինի մեծ տաճարը (VII դ.)։ Հնգանիստ աբսիդ ունեն Քասաղի (IV—V դդ.), Եղվարդի (V դ.) եռանավ և Բագավանի (VII դ.) ու Մրենի (VII դ.) գմբեթավոր բազիլիկաները։ Արտաքուստ բազմանիստ աբսիդը տարածված էր հատկապես Հայաստանի կենտրոնագմբեթ հուշարձաններում։ Եռանիստ է Ն. Տոկարսկու պեղումներով բացված Ողջաբերդի գմբեթավոր եկեղեցու աբսիդը (IV դ.), իսկ Էջմիածնի մայր տաճարի հորինվածքը, արդեն V դ. ստացել է դրսից բազմանիստ չորս աբսիդ։ Բազմանիստ են VI դ. Ջորադիրի և Մաստարայի, VII դ. Հառիճավանքի, Բագարանի, Արթիկի եկեղեցիների աբսիդները (վերջինիս հյուսիսային աբսիդը դրսից կիսաշրջանաձև է)։ Արտաքուստ կիսաշրջանաձև են փոքր խաչաձև գմբեթավոր եկեղեցիներից V դ. Ծովինարի և Տայքի Սբխեչի, բազմանիստ՝ Դորբանտիվանքի (VI դ.), Ջաղավանքի, Ալամանի, Ագրակի (բոլորը VII դ.) աբսիդները։ Նշված բազմաթիվ օրինակները ցույց են տալիս, որ արտաքուստ շեշտված շրջանաձև

---

35 Վ. Հարությունյան, Դվինի 5—7 դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 83։

36 Ալեքսանդր Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, էջ 20։

37 M. Thierry, Monastères armeniens du Vaspurakan, REArm, t. VII, 1970, t. X, 1973–1974.

կամ բազմանիստ աբսիդը բավական տարածված ձև է IV—VII դդ. հայ ճարտարապետության մեջ։ Անկասկած է, որ հետագա ուսումնասիրությունների ընթացքում Հայաստանում կհայտնաբերվեն արտաքուստ դուրս եկող աբսիդով վաղ միջնադարի միանավ նոր հուշարձաններ, սակայն արդեն կարելի է ասել, որ այդ հորինվածքը բնորոշ է հայ ճարտարապետությանը նրա սկզբնավորումից ևեթ։

ОДНОНЕФНЫЕ ПАМЯТНИКИ АРМЕНИИ С ВЫСТУПАЮЩЕЙ АПСИДОЙ

МУРАД АСРАТЯН

Резюме

Этот интересный тип памятников армянской архитектуры до сих пор не являлся предметом исследования. До недавнего времени были известны лишь два—три памятника этого типа, поэтому специалисты считали, что однонефные церкви с выступающей наружу апсидой не характерны для зодчества Армении. Однако исследованиями последних лет выявлен ряд однотипных памятников раннего средневековья (Лусакерт, Батикян, Веришен, Вookеваз, Имирзек, Байбурд), неизвестных в литературе.

Древнейшим памятником этого типа в Армении является сооружение Цолакерта с полукруглой снаружи апсидой, перестроенное в начале IV в. в церковь.

К данному типу относятся также известные в литературе Джарджарисская (IV—V вв.), Джрвежская (IV—V вв.), Парбийская (V в.) и Шохагаванская (V в., реконструкция IX в.) однонефные церкви с пятигранной снаружи апсидой. Приведенные памятники позволяют утверждать, что эта композиция является характерной для армянской архитектуры, причем с первых веков ее формирования.